ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻԱՎՈՐՆԵՐ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՆՐՈՂՈՐՏ

(կառուցվածքային վերլուծության փորձ ըստ ժամանակակից հայերենի տվյալների)

Դ. Վ. ԳՅՈՒԼԶԱՏՅԱՆ

Շարահյուսական ընդհանուր միավորների (ՇԸՄ) վերաբերյալ հատուկենտ տեղեկություններ կան լեզվաբանական գրականության մեջ։ Մինչդեռ շարահյուսական ոչ սակավաթիվ հանգուցային հարցեր հնարավոր կլիներ լուսաբանել այս միավորների ըստ էության բացահայտումից հետո միայն։

Կանգ առնենք այս երևույթին առնչվող՝ գրականության մեջ արձանագրված մի քանի նշումների վրա, ապա, հիմնվելով առաջիկա էական դիտողությունների վրա, ներկայացնենք ՇԸՄ-ի բնույթը և դրանցով շարահյուսական հանրույթի (ՇՀ) կազմավորելու իրողությունը։ Այսպես, Ս. Աբրահամյանը ընդհանուր անդամը ներկայացնում է հետևյալ կերպ. «Նախադասությունների կապակցման շարահյուսական-ոճական միջոցն է կապակցվող նախադասությունների անդամների զեղչումը, որի հետևանքով տարբեր նախադասություններում հանդես են գալիս, այսպես կոչված, ընդհանուր անդամներ։ Այսպիսով, մեկ նախադասության մեջ գործածված անդամը դառնում է իմաստային տեսակետից ընդհանուր՝ նաև այլ նախադասության կամ նախադասությունների համար»[1]։ Այս առումով հարկ է ասել հետևյալը.

Նախ՝ ակնհայտ է, որ զեղչումը կապակցման միջոց չէ։ Ինչպես նշում է Գ. Ջահուկյանը, «...կապակցության հիմնական միջոցները պարզ հավելումը և... շաղկապներն են. զեղչումը բառիս բուն իմաստով հատուկ եղանակ չէ, այլ այն բանի դրսևորումը, որ տվյալ անդամը միացված նախադասությունների համար ընդհանուր է»[2]։

Երկրորդ՝ եթե զեղչումը կապակցման միջոց չէ (իսկ դա իրոք այդպես է), ապա բնականոն է այն հետևությունը, թե ընդհանուր անդամը ամենևին էլ զեղչման հետևանքով չէ, որ հանդես է գալիս։ Ավելին. ինչպես երևում է Գ. Ջահուկյանի բնորոշումից, ընդհանուրի՛ շնորհիվ է զեղչումն իրականանում։

Երրորդ՝ եթե տվյալ անդամը ընդհանուր լիներ միայն իմաստային տեսակետից, ապա կունենայինք իմաստային ընդհանուր միավոր (բացատրությունները՝ համապատասխան օրինակներով, կտրվեն ստորև)։

Եվ վերջապես՝ ընդհանուր անդամի վերաբերյալ մեր դիտողությունները կարող ենք ապացուցել հակառակ ընդունելության մեթոդով։ Ենթադրենք՝ ճիշտ է այն դատողությունը, թե միևնույն անդամը զեղչված կիրառությամբ ընդհանուր է, իսկ անզեղչ կիրառությամբ՝ ոչ։ Տրված են հետևյալ օրինակները.

ա) Իմ դա կեցվածք չէ, քո էությունն է դա (ՎԴ, ԲՀ, էջ 191)։

բ) Եվ դա կեցվածք չէ, քո էությունն է։

Պահանջվում է ապացուցել, որ երկրորդ օրինակում ընդգծված անդամը ընդհանուր է, իսկ առաջինում ընդգծվածները՝ ոչ։ Բերված օրինակների ընդգծված անդամները նշանակելով u-ով, «կեցվածք չէ» ստորոգյալը՝ a-ով,

---

1 Ս. Գ. Աբրահամյան, Վ. Դ. Առաքելյան, Վ. Ա. Քոսյան, Հայոց լեզու, II մաս, Երևան, 1975, էջ 466—465։

2 Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 496։

3 Ա. Հ. Բարտաղյան, Մաթեմատիկա, Երևան, 1983, էջ 76—79։

«էությունն էր» ստորոգյալը՝ a_1-ով՝ առաջին օրինակի համար կունենանք $ua+ua_1$, երկրորդի համար՝ $u(a+a_1)$ բանաձևը։ Ըստ այն դատողության, թե միևնույն անդամը զեղչված կիրառության դեպքում ընդհանուր է, իսկ անզեղչ կիրառության դեպքում՝ ոչ., պետք է եզրակացնել, որ $[u(a+a_1)]$-ը և $[ua+ua_1]$-ը տարբեր կառուցվածքներ են։ Սակայն մաթեմատիկայի դպրոցական դասընթացի՛ց է մեզ ծանոթ այդ բանաձևերի նույնությունը, որը հայտնի է բաշխական օրենք անունով, այն է՝ $u(a+a_1)=ua+ua_1$[4]: Իսկ եթե նրանք հավասար են, ուրեմն չեն կարող տարբեր կառուցվածքներ լինել։ Պարզ է, որ այս դատողությունը հակասում է մեր պայմանին։ Հետևություն. գերշարակարգում (հիպերսինտագմա) միևնույն անդամի բացահայտ (էքսպլիցիտ) և ոչ բացահայտ (իմպլիցիտ) կիրառությունները չեն ազդում այդ անդամի ընդհանրական բնույթի վրա:

Երկու և ավելի շարակարգերի (սինտագմա) կազմում միևնույն (ընդհանուր) անդամի մասին որոշակի նշումներ ունի Է. Աթայանը[5]։ Նա խոսում է ինչպես համադաս, այնպես էլ միադաս բաղադրիչների հետ շարակարգեր կազմող կենտրոնական տարրի մասին։ Է. Աթայանի կարծիքով շարահյուսական «...խմբերը համակցվելով, չեն կապակցվում միմյանց, որպես ամբողջը ամբողջին. ունենալով ինչ-որ ընդհանուր տարր՝ նրանք փոխներթափանցում են մեկը մյուսի մեջ։ Խմբերի համակցման օրենք... գոյություն չունի, ...այդ օրենքները նույնն են, ինչ որ տարրերից պարզագույն խմբեր ձևավորող օրենքները»[6], իսկ համակցությունը հնարավոր է, որովհետև նույն անդամը միաժամանակ երկու տարբեր խմբերի կարող է պատկանել և, փնջային կառուցվածքում, երկու բինար խմբերի կենտրոնական բաղադրիչ դառնալ[7]։ Հասկանալի է, որ խմբերի համակցման օրենքը փոխկաղապարային պայմանավորվածություն ունի և միայն լեզվաբանական իրակությունների չէ, որ բնորոշ է։

Հ. Բոննարը ընդհանուր անդամի քննությունը կատարել է շարույթի հետ կապված ինչ-ինչ հարցեր լուսաբանելու նպատակով։ Նրա կարծիքով նույնպես ընդհանուր տարրի շնորհիվ այդ տարրի հետ կապակցվող միավորները կախված չեն մեկը մյուսից և գտնվում են հատուկ հարաբերության մեջ[8]։ Համանման կարծիք ունի նաև Ս. Ստատին։ Արձանագրելով շարույթի երկանդամ բնույթը [Ստատիի կարծիքով շարույթ է ցանկացած երկանդամ[9] (ինչը մենք շարակարգ ենք անվանում)] և այն իրողությունը, որ բառերի համադասական կապակցությունը չի բավարարում շարույթի երկանդամության սկզբունքին, քանի որ համադաս անդամները «բաց տիպի կառուցվածք» են ներկայացնում, Ստատին գտնում է, որ շարույթի միևնույն անդամը կարող է հանդես գալ նաև այլ շարույթների (շարակարգերի) կազմում։

Գ. Ջահուկյանի մի մասնակի դիտողության մասին արդեն խոսվեց։ Իր «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» գրքի ներածականում նա ունի մի փոքրիկ նշում ևս՝ կապված փոխկաղապարման և դրա տարատեսակի՝ օբյեկտիվ փոխակազմության ժամանակ ընդհանուր տարրերի դուրս ընկնելու հարցի հետ. «Այս դեպքում երկու միավորներ միավորվում են այնպես, որ նրանց ընդհանուր տարրերը սովորաբար դուրս են ընկնում. «Ես գնում եմ տուն»+«Հակոբը գնում է դպրոց»⟶«Ես գնում եմ տուն, (իսկ) Հակոբը (գնում է) դպրոց»[10]։ Լեզվաբանը համասեռ կաղապարների համակցը-

---

4 Բարսուկով, Հանրահաշիվ, Երևան, 1970, էջ 40, 41։

5 Э. Р. Атаян, Предмет и основные понятия структурального синтаксиса, Ереван, 1968, с. 217—220.

6 Նույն տեղում, էջ 219։

7 Նույն տեղում, էջ 320։

8 Г. И. Скепская, Введение в синтагматику, М., 1979, с. 10—11.

9 Նույն տեղում էջ 14—15։

10 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 46։

մամբ տարասեռ կաղապարների գոյություն արձանագրել է նաև բառակազմության ոլորտում[11]։

ՇՀՄ-ի հարցին է անդրադարձել նաև Գ. Գարեգինյանը՝ բազմաստորոգային նախադասության ոլորտում հանգամանալից քննության ենթարկելով նույն գլխավորին համաստորադասվող «համասեռ» և «անհամասեռ» երկրորդականներով, այլև մի քանի գլխավորներով և ընդհանուր երկրորդականներով կառույցները[12]։

ՇՀՄ-ի բնույթը պարզելու համար դիմենք մանկական խոսքի տվյալներին։ Յու. Ապրեսյանի վկայությամբ առաջին տիպի անջատական նախադասությունները, որոնք հանդիպում են մոտավորապես մեկ տարեկան տաս ամսական երեխայի խոսքում, հաստատական երկանդամ նախադասություններն են[13] (օրինակ՝ Փիսոն փախավ)։ Ըստ որում, սկզբնական շրջանում երեխայի խոսքում նմանատիպ կառույցները երևան են գալիս իբրև մեծահասակների հարցերի պատասխաններ (երբ վերջիններս ուզում են «բացել» իրենց փոքրիկի լեզուն)։ Բերենք այդպիսի մի երկխոսության նմուշ.

Երեխա—Փիսոն փախավ։

Մեծահասակ—Ո՞ւր փախավ։

Երեխա—Փախավ կտուրը (կտուրը—Դ. Գ.)։

Մեծահասակ—Ո՞վ ասավ փիսոյին՝ փախի (ը)։

Երեխա—Ալամն ասավ (Արամը. ինքն իրեն երրորդ դեմքով է ներկայացնում—Դ. Գ.)։



Գծ. 1։

Միառժամանակ անց, որպես կանոն, երեխան նմանատիպ նախադասություններ է արտասանում առանց հարցերի օժանդակության, մոտավորապես «Փիսոն փախավ։ Փախավ կտուրը» տեսքով։ Սա երեխայի կողմից բանաշար (խոսքաշար) կազմելու նախնական փուլն է։ Հաջորդ փուլում նրա արտասանած նախադասություններում երևան են գալիս լրացական բառեր (Փիսոն փախավ կտուրը)։ Ի՞նչ տեղի ունեցավ։ Առաջին հայացքից պարզ թվացող այս իրողությունը կապված է ուղեղի բավականին բարդ աշխատանքի հետ։ Իսկ այդ աշխատանքի մասին հեռավոր պատկերացում կարելի է կազմել նաև լեզվական, մասնավորապես՝ շարահյուսական որոշ գործողությունների բացահայտման միջոցով։ Դրա համար վերի (Փիսոն փախավ կտուրը)

---

11 Նույն տեղում, էջ 13—14։

12 Գ. Լ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1984, էջ 323—340։

13 Ю. Д. Апресян, Идеи и методы современной структурной лингвистики, М. 1966. с. 183.

Նախադասության վերլուծությունը կատարենք՝ դիմելով բազմությունների ուսմունքի օգնությանը։ Նախադասությունը բաղկացած է երկուական երկտարր ենթաբազմություններից՝[14] (Փիսոն փախավ) և (Փախավ կտուրը)։ Ինչպես տեսնում ենք, նշված երկու բազմություններում կա ընդհանուր տարր՝ «փախավ», ըստ որում այդ բազմությունները հատվել են, քանի որ ընդհանուր տարրը նախադասության մեջ միանգամյա գործածություն ունի, և հենց ինքն էլ ինքնուրույն (ենթա)բազմություն է։ Այս ամենը կարելի է պատկերել էյլերյան շրջանների տեսքով[15] (գծ. 1)։

Գծագրերի մեջ՝

C=A∩B=*(փիսոն փախավ) ∩ (փախավ կտուրը)*

C=*փախավ*

H—*հանրաբազմություն (ունիվերսալ բազմություն)*

Այսպիսով՝



Գծ. 2։

Միևնույն տարրը բազմաթիվ շարակարգերի բաղադրիչ կարող է լինել։ Դիտարկենք բազմահատյալ շարակարգերի այդպիսի մի օրինակ. Գեղեցկադեմ աղջիկներն ու պատանիները երգում էին անհոգ։

1) Գեղեցկադեմ աղջիկներն ու պատանիները→

⟶(գեղեցկադեմ աղջիկները) ∩ (գեղեցկադեմ պատանիները)

∪⟶(գեղեցկադեմ)։

2) Աղջիկներն ու պատանիները երգում էին⟶

⟶(աղջիկները երգում էին) ∩ (պատանիները երգում էին)

∪⟶(երգում էին)։

3) Աղջիկներն ու պատանիները երգում էին անհոգ⟶

⟶(աղջիկներն ու պատանիները երգում էին) ∩ (երգում էին անհոգ)

∪⟶(երգում էին)։

4) Գեղեցկադեմ աղջիկներն ու պատանիները երգում էին⟶

⟶(գեղեցկադեմ աղջիկներն ու պատանիները) ∩ (աղջիկներն ու պատանիները երգում էին)

∪⟶(աղջիկներն ու պատանիները)։

Այսօրինակ բազմահատյալությունը կարելի է պատկերել հետևյալ կերպ (գծ. 3)։

Առերևույթ պարզ թվացող այս օրինակը բազմաթիվ շարակարգերի (իբրև ենթաբազմությունների) տարատիպ հատումների արդյունք է։ Շարակարգ-բազմությունների հատումն իրականանում է դրանցում առկա այս կամ այն ընդհանուր տարրի շնորհիվ։ Այսպիսով, ընդհանուր են կոչվում շարահյուսական այն միավորները, որոնք առանց քերականական փոփոխության հանդես են գալիս գերշարակարգի առնվազն երկու բաղադրիչ շարակարգերում:

Եթե ասում ենք, որ միևնույն տարրը հանդես է գալիս երկու և ավելի շարակարգերում, ապա պարզ է, որ այդ շարակարգերը կամ հատված են (հատ-

---

14 *Ա. Հ. Քարտաշյան, նշվ. աշխ., էջ 5—21։*

15 *Նույն տեղում, էջ 10։*

վել են), կամ էլ հատելի են։ Պետք է նկատել, որ զուտ մաթեմատիկական տեսանկյունով «հատելի» տերմինը չի արդարացվում։ Այսպես, անկախ արդյունքից (անկախ տարր պարունակող կամ դատարկ բազմություն լինելուց), մաթեմատիկորեն հատելի են ոչ միայն, ասենք, M=(գեղեցկադեմ աղջիկները) և N=(գեղեցկադեմ պատանիները) բազմությունները, այլև L=(անհոգ երգում էին) և K=[գեղեցկադեմ (միատարր)] բազմությունները՝

$$M \cap N = C = (\text{գեղեցկադեմ})$$
$$L \cap K = \varnothing \ (\text{դատարկ բազմություն})։$$



Գծ. 3։

Վերանալով մաթեմատիկական այս «գերխիտ» վերացականությունից, այսինքն՝ բացառելով ինչպես դատարկ բազմության, այնպես էլ բազմությունների հատման կրկնաբանական (իդեմպոտենտ) հատկության հարցը [M ∩ M=M (այս վերջին հատկությունը լիովին կիրառելի է լեզվի ուսմունքի նկատմամբ)]՝ կարող ենք ասել, որ ընդհանուր տարր ունեցող շարակարգերը հատունակ են։

Այն գերշարակարգը, որն ունի ՇԸՄ, կոչվում է շարահյուսական հանրությունը (ՇՀ)։

ՇՀ-ի բանաձևը կարելի է ներկայացնել երկու տարբերակով՝

$$\text{I} \quad U = u\ (a + \ldots + a_n)$$
$$\text{II} \quad U = u\ (a + \ldots + n)$$

I տարբերակը վերաբերում է ընդհանուրի՝ համադաս և փոխենթադաս*, II-ը՝ միադաս[16] գրավորում** ունեցող բաղադրիչների հետ կապակցվելու դեպքերին, որտեղ U—ՇՀ, u—ՇԸՄ, a—ՇԸՄ-ի հետ շարակարգ բաղադրող տարր, n/I/—համադաս բաղադրիչների քանականիշ [a, a_1, a_2 . . . a_n, այսինքն՝ այն (n-ը) աեսականորեն անվերջ է (1<n→∼)], n/II/—միադաս բաղադրիչների քանականիշ [a, b, c . . . n (1<n<∼)]։

---

* Փոխենթադասությունը ստորոգային միավորների դիրքային հարաբերությունն է։

** Դրավորումը շարակարգային անդամների դիրքային հարաբերությունն է. այն ստորոգական հարաբերությունն է շարակարգ բաղադրող միավորների և կամ այդ միավորներից մեկի՝ մյուսի հանդեպ գրաված դիրքի։

16 Գ. Բ. Ջահուկյան, Խոսքի մասերի կաղապարային դասակարգումը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1976, № 1, էջ 16—30)։

Նվազագույն ՇՀ-ն լեռանդամ է՝ բաղկացած 1 ՇԸՄ-ից և սրա հետ կապակցվող 2 տարրերից։ ՇՀ-ն կարող է վերաճել գերհանրոլորտի, եթե ՇԸՄ-ն կապակցվի և՛ համադաս, և՛ միադաս անդամների հետ։ Գերհանրոլորտի բանաձևը նարտածվի նախորդ բանաձևի երկու տարբերակներից, այն է՝

$$Ը = u \quad a_n - n/,$$

որտեղ Ը-ն գերհանրոլորտն է (ԳՀ)։

Փոխընդհանրության օրենքը։ Եթե համադաս անդամներն ունեն ՇԸՄ-ներ միաժամանակ և՛ ստորադաս, և՛ գերադաս կամ փոխենթադաս դրավորմամբ, ապա այդ անդամներն իրենք էլ ՇԸՄ են նշված ՇԸՄ-ների համար։

Այս օրենքի բանաձևը երկու տարբերակ կունենա։ Տանք պայմանանիշերի բանալին (գծ. 4).

- մատնանշում է ստորադաս անդամը
- մատնանշում է գերադաս անդամը
- փոխենթադասության պայմանանիշը
- համադասության նշան
- հետևություն /հետևության նշան/

ա/ a ← /B — B_I/ → C

բ/ a ← /B — B_I/ → C

Այսինքն՝ /aB/∩ /aB_I/ =/a/ և /CB/∩ /CB_I/ = /C/ ⇒

⇒ (a /B-B_I/) ∩ (C /B-B_I/) = / B - B_I /։

Գծ. 4։

Բերենք մեկ նմուշ ա)-ի համար՝ կարենի մապիտն ու քանոնը ջարդեց Սերոբի ընկերը։ Իսկ բ)-ի համար տե՛ս գծ. 2։ Այս օրենքը գործում է նաև փոխենթադաս դրավորման մի մասնակի դրսևորման մեջ, որի մասին կխոսվի համապատասխան տեղում։

Շաբանյուսական հանրոլորտ և ընդհանրական իմոլորտ. ՇԸՄ-ի դրավորումը։ Եթե ՇԸՄ-ն ունի ստորադաս գրավորում համադաս միավորների նկատմամբ, ապա այն նպատակահարմար է անվանել իր պաշտոնով՝ հավելելով «ընդհանուր» բառը (ընդհանուր որոշիչ, ընդհանուր տեղի պարագա են), իսկ համադաս միավորների նկատմամբ գերադաս դրավորում ունեցող ՇԸՄ-ն՝ ընդհանուր գերադաս։ Այս նպատակահարմարությունը պայմանավորված է հետևյալով. ստորադաս ՇԸՄ-ն իրականում հենց նույն անդամն է՝ ըստ իր պաշտոնի՝ քերականական ընդհանրական նշանակությամբ, մինչդեռ գերադաս ՇԸՄ-ն այդ ընդհանրական արժեքը ձեռք է բերում ոչ ըստ իր պաշտոնի։ Այսպես, «Աշնան քամուց թափվում էին կարմիր ու դեղին տերևները» նախադասության մեջ «տերևները» ենթական, որպես այդպիսին, ընդհանուր չէ, քանի որ ընդհանուր ենթակա ասելով հասկանում ենք տարբեր գործողություններ և կամ միևնույն գործողությունը մի քանի անգամ կատարող առարկա։ Այսինքն՝ ընդհանուր ենթակայի գոյությունը կարող է ապահովվել [ենթակա (ստորոգյալ+ստորոգյալ)] կաղապարով։ Մինչդեռ, ասենք, որոշիչը, եթե ունի բազմակի որոշյալներ (հմմտ. «Գեղեցկադեմ...» օրինակը), ապա ցույց է տալիս դրանցից յուրաքանչյուրի կամ որակը, կամ որպիսությունը, կամ քանակը են, այդ պատճառով էլ կկոչվի ընդհանուր որոշիչ։

Ասվածից հետևում է, որ՝ 1) ընդհանուր դերադաս ունեցող համադաս միավորները կունենան համաստորադաս, 2) ընդհանուր ստորադաս տարրով համադաս միավորները՝ համադերադաս, 3) ընդհանուր փոխենթադաս տարրով համադաս միավորները՝ համափոխենթադաս դրավորում, 4) միևնույն (ընդհանուր) անդամի նկատմամբ ստորադաս և դերադաս դիրք զբաղեցնող անդամները կկազմեն տարադրավորում, 5) ընդհանուրին ստորադասված մեկից ավելի տարապաշտոնակիր անդամները կունենան միաղասական դրավորում։

Այստեղ կքննենք միայն համափոխենթադասությունը։ Համափոխենթադասությամբ ՇՀ է գոյանում մեկ բացարձակ (բոլոր դեպքերում կիրառելի) և երկու մասնակի կաղապարներով՝

1) [Ենթակա (ստորոգյալ+ստորոգյալ)] (բացարձակ)
2) [ստորոգյալ (ենթակա+ենթակա)]
3) [(I ենթակա+I ստորոգյալ) (II ենթակա+II ստորոգյալ)]

Ընդհանուր ենթակայի գոյությունը պայմանավորված է բազմակի ստորոգյալի առկայությամբ, ասել է թե՝ մենաստորոգային կառույցներում ընդհանուր ենթակա լինել չի կարող, օրինակ՝ «Ու տե՛ս, որդի՛ս, ո՞ւր էլ լինես, Այս լուսնի տակ ո՞ւր էլ գնաս, Թե մորդ անգամ մտքից հանես, Քո մա՞յր լեզուն չմոռանաս» (ՍԿ, 25)։

Ընդհանուր ստորոգյալի հիմնական դերը համազոր (բազմակի) ենթակաների հետ հանդես գալն է։ Սակայն ընդհանուր ստորոգյալը, որպես այդպիսին, գործառական խիստ սահմանափակություն է ցուցաբերում։ Այսպես, պայմանավորված ենթակայի բազմակիությամբ՝ բայ-ստորոգյալը հոգնակի ձևով է գործածվում, բայց այդ ստորոգյալը ընդհանուր ստորոգյալ կդառնա այն դեպքում միայն, երբ համազոր ենթականերից յուրաքանչյուրը դրված լինի հոգնակի թվով (տե՛ս աղյուսակը)։

Ոչխարների անուշ բառանչը, արջառների ուրախ ձայնարկությունը կենդանացնում էին խոտավետ հովիտները . . (Ր, 39)։	Մինչ վարպետներ արդար՝ նվիրումով սրտի, Շիկամորուս այրեր հիսուսաղեմ, ինձ ձուլեցին երկար (ՍԿ, 319)։
. . . բառանչը . . . կենդանացնում էր	. . . վարպետները . . . ձուլեցին
. . . ձայնարկությունը . . . կենդանացնում էր	. . . այրեր/ը/ . . . ձուլեցին
ԷՐ+ԷՐ ⟶ ԷԻՆ	. . . ԻՆ+ . . . ԻՆ ⟶ . . . ԻՆ

«Կենդանացնում էին» ստորոգյալի՝ երկպլանայնորեն ընդհանուր միավոր լինելուն խանգարում է գլխավոր անդամների համաձայնության օրենքը (եզակի բազմակի ենթակայի հետ՝ հոգնակի ստորոգյալ), և քանի որ նշված անդամը առանց թվային փոփոխություն կրելու չի կարող առանձին-առանձին գործածվել համազոր ենթականերից յուրաքանչյուրի հետ, ուստի այն ընդհանուր է միայն բովանդակության պլանում։ Երկրորդ օրինակում քերականական ոչ մի փոփոխություն չի կատարվում, ուստի «ձուլեցին»-ը ընդհանուր միավոր է թե՛ արտահայտության և թե՛ բովանդակության պլանում, դրանով էլ նա ընդհանուր ստորոգյալ է (հմմտ. ՇԸՄ-ի սահմանումը)։

Ասվածից հետևում է, որ միայն բովանդակության պլանում ընդհանուր տարրերի հանդիպելիս գործ ունենք իմաստային ընդհանուր միավորների հետ։ Իսկ քանի որ ՇԸՄ-ին հատուկ է երկպլանայնությունը, ապա ՇԸՄ ասելով միշտ ենթադրում ենք նաև ԻԸՄ (իմաստային ընդհանուր միավոր). հետևություն.

1) միայն բովանդակության պլանում ընդհանուր տարր ունեցող գերշարակարգը հանդես կգա իբրև ընդհանրական իմոլորտ,

2) շարահյուսական հանրոլորտը միշտ ենթադրում է նաև ընդհանրական իմոլորտի գոյություն։

Ընդհանուր ստորոգյալ է առաջանում նաև այն դեպքում, երբ համազոր ենթակաները ցույց են տալիս հաջորդաբար կատարվող միևնույն գործողությունը։ Այս դեպքում, եթե ենթակաները եզակի թվով են գործածվում, ընդհանուր ստորոգյալը նույնպես դրվում է եզակի թվով, օր.՝ «Սկզբում եկավ Սամվելը, հետո՝ Վարդը, հետո՝ Արփինեն, ու միանգամից լցվեց, կենդանացավ սենյակը» (ՀԱ, 17)։

Ընդհանուր ստորոգյալը կարող է ունենալ նաև անորոշ դերբայով արտահայտված համազոր ենթականեր։ Այս դեպքում նույնպես ստորոգյալը դրվում է եզակի թվով, օրինակ՝ «Բայց վեճը շատ խոսելը և բարձր կանչելը չէր լուծում» (ԱԲ, 350)։

Փոխընդհանրության օրենքը գործում է նաև համափոխենթագաս դրավորման ժամանակ՝ առնվազն երկուական ենթակայի և ստորոգյալի առկայության պայմաններում, այսինքն՝ եթե բազմակի ենթական ունի ընդհանուր բազմակի ստորոգյալ, ապա բազմակի ենթական ինքն էլ ընդհանուր է ընդհանուր բազմակի ստորոգյալի համար, և հակառակը: Այս տարբերակը կարտահայտվի հետևյալ բանաձևով՝

$$/a—a_1—\ldots—a_n/ \qquad /b—b_1—\ldots—b_n/,$$

որտեղ՝ $n \geqslant 0$ (n-ը հավասար է զրոյի կամ մեծ է նրանից)։ Բերենք մի պարզագույն նմուշ՝ «Ուսանողներն ու ուսանողուհիները երգում ու պարում էին»։

Ընդհանուր ստորոգյալը քննելիս չի կարելի աչքաթող անել, այսպես կոչված, մասնական ընդհանուր անդամների հարցը։ Դրանք են՝ «պիտի» («պետք է») ընդհանուր եղանակիչը, ընդհանուր օժանդակ բայը և ընդհանուր էական բայը (հանգույցը)։ Ի տարբերություն բուն ընդհանուր անդամների, մասնական ընդհանուր անդամները ընդհանրական նշանակություն են ունենում միայն ղեկչված գործածությամբ, որովհետև սրանք նախադասության պաշտոնակիր անդամներ չեն, այլ պարզ կամ բաղադրյալ ստորոգյալի մի մասն են։ Այսպես՝ «Անմեղ գառնուկնե՞ր են, երկնային հրեշտակնե՞ր» (ՌՂ, էջ 39) նախադասության մեջ եթե «հրեշտակներ» ստորոգելիի մոտ նույնպես դրվեր «են» հանգույցը, ապա կկորցներ ընդհանրական կապը առաջին ստորոգյալի («գառնուկներ են») հետ։ Ստորոգյալի օժանդակ (սպասարկու) բաղադրիչ կազմող այն ընդհանուր բառերը, որոնք իրենց ընդհանրական նշանակությունը ձեռք են բերում համազոր ստորոգյալ(ներ)ի նույնանուն մասի (բաղադրիչի) գեղչումով, կոչվում են մասնական ընդհանուր անդամներ:

Մեր նպատակը չէր առանձին-առանձին դնել և քննել շարահյուսական ընդհանուր միավորները իրենց պաշտոններով։ Եթե համեմատաբար երկար կանգ առանք ընդհանուր ստորոգյալի վրա, ապա «մեղքը» հենց այդ ընդհանուր անդամինն է, քանի որ այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են նրան, ուրիշ ոչ մի ընդհանուր միավոր չունի։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ—Ակսել Բակունց, Հայ դասականների գրադարան, Երևան, 1986։
ՀԱ—«Հայաստանի աշխատավորուհի», 1979, № 3։
ՎԴ—Վ. Դավթյան, Բարի հական, Երևան, 1979։
ՍԿ—Ս. Կապուտիկյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1984։
ՌՂ—Ռ. Ղազանչյան, Պատմվածքներ, Երևան, 1980։
Ր—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1986։

ОБЩИЕ СИНТАКСИЧЕСКИЕ ЕДИНИЦЫ И СИНТАКСИЧЕСКАЯ СВЕРХСИНТАГМА

(опыт структурного анализа по данным современного армянского языка)

Д. В. ГЮЛЬЗАТЯН

Резюме

Общая синтаксическая единица (ОСЕ) определяется как общий элемент в составе синтаксической сверхсинтагмы (обобщенной синтагмы). ОСЕ присуща двухплановость—одновременная отнесенность к планам содержания и выражения. При наличии общих элементов только в плане содержания речь идет лишь об общих семантических единицах (и, соответственно, семантической сверхсинтагме), тогда как ОСЕ всегда включает элементы, относящиеся к сферам как синтаксиса, так и семантики. Возникновение сверхсинтагмы особенно хорошо прослеживается в детской речи, при переходе ребенка от двучленных синтаксических предложений к составлению синтаксических сверхсинтагм, заключающих общие синтаксические единицы.